#225 (1706), հինգշաբթի, դեկտեմբեր 14, 2006թ.

ՌԵՅՏԻՆԳԱՎՈՐԵԼ ԵՆ

ԵՎՍ 38 ԱԿԱԴԵՄԻԿՈՍԱՑՈՒ

Այսօր Գիտությունների ազգային ակադեմիայում փակ դռների հետեւում տեղի է ունենալու պատմական մե՜ծ խաղարձություն:

Այսօր առավոտից ակադեմիայում սկսվում են ԳԱԱ թղթակից անդամների ընտրությունները: 129 հոգանոց մի բանակ, որի մեջ կան տարբեր կալիբրի ներկա եւ նախկին պաշտոնյաներ, հայտնի ու անհայտ գիտնականներ, փորձելու են ձեռք բերել գիտական գրեթե ամենաբարձր կոչումը: Իսկ կոչման համար պայքարը բավական թեժ է լինելու, քանի որ 129-ը պայքարելու են 38 տեղի համար: Ակադեմիայի ղեկավարությունը, սակայն, ԳԱԱ թղթակից անդամների ընտրության համար մշակել է այնպիսի մի նոր մեխանիզմ, որ ընտրությունների ժամանակ սպասվող անհարմար ու անցանկալի իրավիճակներից կարողանա շատ արագ դուրս գալ: Այդ մեխանիզմը գիտնականներից շատերը համարում են սարսափելի: Բանն այն է, որ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի նախաձեռնությամբ, փորձագետներից կազմված խմբերը մինչ ընտրությունները ռեյտինգավորել են թեկնածուներին: ԳԱԱ թղթակից անդամների բոլոր թեկնածուներին բաժանվել է «գիտնականի թերթիկ», որի մեջ նրանք մեկ առ մեկ լրացրել են, թե քանի հոդվածի հեղինակ են, քանի աշակերտ ունեն, քանի գիտական նվաճում ունեն: Նվաճումները գնահատվել են 10 բալով, աշակերտների քանակը՝ 6, հոդվածները՝ 4: Ու հիմա թեկնածուներից ով շատ միավոր հավաքի, ընտրությունների ժամանակ առավելությունը տրվելու է նրան: Սա գիտնականները համարում են խայտառակություն, քանի որ, նրանց կարծիքով, հոդվածների կամ աշակերտների քանակով չի կարելի գիտնականին ռեյտինգավորել այն պարզ պատճառով, որ մեկը կարող է քիչ թվով նորմալ հոդված ունենալ, մյուսը՝ բազմաթիվ անկապ հոդվածներ, մեկը, կարող է, զբաղված է գիտական նվաճումներով, որոնք քանակով շատ չեն, իսկ մյուսը կոնվեյերով գիտության թեկնածուներ է տալիս: Այսինքն, թեկնածուների ռեյտինգավորման ժամանակ հաշվի է առնվել ամենեւին ոչ գիտնականի որակը: Բայց այստեղ կա մեկ այլ խնդիր, որն ամենակարեւորն է. ի՞նչ նպատակով է արվում ռեյտինգավորումը: Ամբողջ խնդիրն այն է, որ բալային համակարգն ընտրությունների ժամանակ կարող է հաշվի առնվել, կարող է՝ չառնվել: Այն ամենեւին էլ պարտադիր չափորոշիչ չէ ընտրությունների ժամանակ, եւ թեկնածուի վարկանիշի հարցը կարող է բարձրացվել միայն այն ժամանակ, երբ դա ձեռնտու է ԳԱԱ նախագահությանը իր թեկնածուին անցկացնելու ժամանակ: Իհարկե, այս կամ այն թեկնածուի օգտին ձայներ հավաքելու գործընթացը սկսվել է դեռ շատ վաղուց, եւ յուրաքանչյուր թեկնածու մոտավորապես գիտի, թե ինքը քանի ձայն կարող է ստանալ, եւ ով իրեն ձայն կտա: Արդեն մոտ 2 ամիս է՝ թեկնածուները տարբեր մեթոդներով փորձում են ձայներ հավաքել: Բայց ռեյտինգը լավ ապահովագրություն է անցանկալի իրավիճակներում: Իսկ ԳԱԱ թղթակից անդամների այս ընտրությունները աննախադեպ են: Աննախադեպ են ոչ միայն այն պատճառով, որ դրանց մասնակցում են մեծ քանակությամբ պաշտոնյաներ ու ռեկտորներ, եւ ոչ միայն այն բանի համար, որ նրանց մի մասը «Բարգավաճ Հայաստանից» է, մի մասը՝ ՀՀԿ-ից, մի զգալի մասը՝ ղարաբաղցի, մի քանիսը ԳԱԱ նախագահի բարեկամներն են, եւ, ըստ էության, այստեղ նաեւ քաղաքական պայքար է գնալու, այլ նաեւ այն պատճառով, որ նախկինում ԳԱԱ թղթակից անդամների ընտրությունների ժամանակ երբեւէ այսքան մեծ քանակությամբ թեկնածուներ չեն առաջադրվել: Ինչպես երեկ մեզ իրազեկեցին ԳԱԱ-ի մեր աղբյուրները, նախկինում թղթակից անդամների ընտրությունների ժամանակ առաջադրվում էին այսօր առաջադրվածների կեսի կեսը միայն: Այսինքն, նայելով թեկնածուների այս թվին՝ կարելի է եզրակացնել, որ գիտությունը ՀՀ-ում ծաղկում է ապրում: Սակայն մենք 1 անգամ արդեն նշել ենք, որ ԳԱԱ թղթակից անդամների թեկնածուների մեջ գրեթե չկան կամ շատ քիչ են մարդիկ, որոնք հայտնի են իրենց գիտական աշխատանքներով: Օրինակ, Ֆիզիկայի բլոկում ներկայացված են 30 թեկնածուներ, սակայն գիտությանը մոտ կանգնած մարդիկ պնդում են, որ նրանց մեջ ամենաշատը 2-ն են արժանի թղթակից անդամի բարձր կոչմանը: Նույնը նաեւ մյուս բլոկներում է: Բայց, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, գիտական կոչումներն այժմ մոդա են եւ հատկապես վերջին 1-2 տարում եկել են փոխարինելու մեդալներին ու շքանշաններին: Եւ այսպես, 2 օր անց ԳԱԱ-ն կունենա եւս 38 թղթակից անդամ: Այս պահին նրանք 18-ն են: Ընտրություններն այսօր տեղի են ունենալու նախ ԳԱԱ բաժանմունքներում՝ ակադեմիական համակարգով: Փակ գաղտնի քվեարկության արդյունքում 2-րդ փուլ են անցնելու նրանք, ովքեր կհավաքեն ձայների կեսից ավելին: Քվեարկելու են տվյալ բաժանմունքի ակադեմիկոսները եւ թղթակից անդամները: Նրանք իրավունք ունեն իրենց ձայնը տալ միանգամից մի քանի թեկնածուների: 3-րդ փուլ են անցնելու նրանք, ովքեր կհավաքեն ձայների 2/3-ից ավելին: Այս արդյունքները գալու են ԳԱԱ Ընդհանուր ժողով, որտեղ էլ կրկին փակ գաղտնի քվեարկությամբ հաստատվելու կամ չի հաստատվելու թեկնածուն: Թեկնածուներն անձամբ իրավունք չունեն ներկա լինելու ընտրություններին: Ամեն ինչ տեղի է ունենալու առանց նրանց: Առայժմ որոշված է նաեւ, որ փակ է լինելու մուտքը նաեւ լրագրողների համար:

ՍԻՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ